

««Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության ծրագրերի կանոնակարգ»-ում առաջարկվող փոփոխությունները և լրացումները

1. ««Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության ծրագրերի կանոնակարգ»-ի (հաստատված՝ 2018 թվականի մարտի 23-ի համաժողովի որոշմամբ) (այսուհետ՝ Կանոնակարգ) 1.3. կետը «բյուջեի» բառից հետո լրացնել «բյուջեի ծախսերի» բառով:
2. Կանոնակարգի 3.1. կետ «երեխաներին» բառերից հետո լրացնել «և (կամ) Հայաստանի Հանրապետությունում բնակվող թոռներին» բառերով:
3. Կանոնակարգի 3.3. կետի «հրդեհի» բառից հետո լրացնել «, **Կազմակերպության** անդամի վճարովի վիրահատության (բացառությամբ՝ կոսմետիկ) և (կամ) վճարովի թանկարժեք բուժման» բառերով:
4. Կանոնակարգի 4.5.2. ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
5. «4.5.2. Ծննդյան օրվա և տոների կապակցությամբ **Կազմակերպության** անդամին տրվող նվերի (դրամական նվերի), իսկ Ամանորի կապակցությամբ **Կազմակերպության** անդամի մինչև 11 տարեկան երեխաներին և (կամ) Հայաստանի Հանրապետությունում բնակվող թոռներին տրվող նվերների համար հատկացվող ֆինանսական միջոցների ծավալը (դրամական նվերի չափը) սահմանվում է արհկոմիտեի որոշմամբ:
Հայաստանի Հանրապետությունում բնակվող թոռների տարիքային սահմանափակումը, որը չի կարող գերազանցել տասը տարեկանը, կատարվում է արհկոմիտեի որոշմամբ:»
6. Կանոնակարգի 4.7.1. ենթակետում «մոտ հարազատությունը հավաստող փաստաթղթի» բառերը փոխարինել «դիմողի անձնագրի» բառերով:
7. Կանոնակարգի 4.7. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.7.3. ենթակետով.
«4.7.3. **Կազմակերպության** անդամի վճարովի վիրահատության, բացառությամբ՝ կոսմետիկ վիրահատության, և (կամ) վճարովի թանկարժեք բուժման դեպքում տրամադրվող դրամական օգնության ծավալը սահմանվում է արհկոմիտեի որոշմամբ: Դրամական օգնությունը տրամադրվում է **Կազմակերպության** անդամի դիմումի դեպքում: Դիմումին կցվում է կատարված վիրահատությունը և (կամ) բուժումը հավաստող փաստաթղթերի կամ էլ անաշխատունակության թերթիկի պատճենները»: